ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Կայուն սնունդ և գյուղատնտեսություն՝ Կայուն զարգացման 2030 օրակարգի և «Կլիմայի փոփոխության մասին» Փարիզի համաձայնագրի իրականացման նպատակով» խորագրով տարածաշրջանային աշխատաժողովին մասնակցելու նպատակով Մինսկ, Բելառուսի Հանրապետություն կատարած այցի վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը**

Շամամ (Սոնա) Հարությունյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

Մինսկ, Բելառուսի Հանրապետություն, 2017թ. հունիսի 19-ից 21-ը

4. **Հրավիրող կողմը**

Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակ

5. **Գործուղման նպատակը**

Մասնակցություն «Կայուն սնունդ և գյուղատնտեսություն՝ Կայուն զարգացման 2030 օրակարգի և «Կլիմայի փոփոխության մասին» Փարիզի համաձայնագրի իրականացման նպատակով» խորագրով տարածաշրջանային աշխատաժողովին:

6. **Քննարկված թեմաները**

Կայուն սնունդ և գյուղատնտեսություն՝ Կայուն զարգացման 2030 օրակարգի և «Կլիմայի փոփոխության մասին» Փարիզի համաձայնագրի իրականացման համատեքստի ազդեցությունը գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության վրա, ԿԶՆ ցուցիչների, մոնիթորինգի և դրա հետ կապված հնարավորությունների, տեղեկատվության հետ կապված խնդիրների դիտարկում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Աշխատաժողովի հիմնական նպատակն էր անդամ երկրների կարողությունների զարգացումը կայուն զարգացման նպատակներին հասնելու հարցում, ինչպես նաև մասնակիցների շրջանում իրազեկման բարձրացումը՝ կայուն սննդի և գյուղատնտեսության առանցքային դերի և նշանակության վերաբերյալ:

Աշխատաժողովին մասնակցում էին շուրջ 100 բարձրաստիճան պաշտոնյաներ 20 երկրներից (յուրաքանչյուր երկրից շուրջ 5 մասնակից): Լինելով ՀՀ վարչապետի 2017 թվականի փետրվարի 21-ի N 155-Ա որոշմամբ հաստատված՝ ՄԱԿ-ի «Կայուն զարգացման նպատակներ» համաշխարհային գործընթացի հայաստանյան աշխատանքները կանոնակարգելու նպատակով ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի նախագահի տեղակալ և Կայուն զարգացման նպատակները տեղայնացնելու աշխատանքները համակարգող «Սոցիալական» ենթախմբի ղեկավար, ես նույնպես ներգրավված էի հայկական պատվիրակության կազմում:

Հանդիպման առաջին օրը, պաշտոնական ողջույնի խոսքով հանդես եկավ Բելառուսի գյուղատնտեսության նախարար պարոն Լեոնիդ Զայացը, վերանայվեց օրակարգը, համաձայն որի հաջորդեցին հետևյալ հարցերի քննարկումները.

- Պարենը և գյուղատնտեսությունը Օրակարգ 2030-ում և Փարիզի համաձայնագրում, կայուն պարենի և գյուղատնտեսության սկզբունքները
- Գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնաբուծության կայունության ապահովումը կլիմայական փոփոխության և շրջակա միջավայրի դեգրադացման համատեքստում
- Միջոլորտային քաղաքականության շրջանակները
- Գյուղական տնտեսություններում աղքատության և պարենային անապահովության դեմ պայքարում սոցիալական պաշտպանության և կայուն գյուղատնտեսության միջև կապի ապահովում
- Ոլորտային նախարարություններում երկարաժամկետ և տարեկան պլանավորման հարցում Կայուն զարգացման նպատակների հաշվի առնում
- ԿԶՆ ցուցիչների, մոնիթորինգի և դրա հետ կապված հնարավորությունների, տեղեկատվության հետ կապված խնդիրների դիտարկում (նախարարությունների և Ազգային վիճակագրական ծառայությունների միջև կապի ապահովում)
- Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում ԿՊԳ սկզբունքների գործնական կիրառման օրինակներ
- Ռեսուրսների մոբիլիզացման հնարավորությունների, ՊԳԿ դերը երկրներին այդ հարցում աջակցելու տեսանկյունից, առաջընթացի հեռանկարներ
- Կանաչ կլիմայի հիմնադրամի կողմից հաջողության հասնելու խելացի ճանապարհ:

Աշխատաժողովի մասնակիցներին ներկայացվեց 2030 օրակարգի նպատակների և Փարիզի համաձայնագրով նախատեսված ազգային մակարդակում սահմանված ներդրումների հետևողական կատարումը՝ կիրառելով կայուն պարենի և գյուղատնտեսության (ԿՊԳ) հինգ սկզբունքները: Աշխատաժողովն օգնեց ավելի լավ

հասկանալ ԿՊԳ սկզբունքները, որոնք թույլ կտան համատեղ և համակողմանի գործողություններ իրականացնել գյուղատնտեսության և հարակից ոլորտներում և պարզել ազգային և տարածաշրջանային մակարդակում Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության աջակցության առաջնահերթությունները:

Կայուն զարգացման նպատակների հաջող իրագործումը զգալիորեն կախված է այն հանգամանքից, թե որքանով են երկրներն ունակ կայուն զարգացում ապահովել՝ կիրառելով համագործակցության նոր մոդելներ՝ առավել միջոլորտային և ինտեգրված, այդ թվում նաև գյուղատնտեսությունից դուրս ոլորտներում:

Տարբեր երկրներում կայուն զարգացման նպատակների իրագործման տարբեր կառուցվածքներ կան, և տարբեր ԿՀՆ-ներ, որոնք պարենը և գյուղատնտեսությունը դնում են ԿՀՆ իրականացման կենտրոնում: ԿՀՆ իրականացման գործում կարևոր են ԿՊԳ սկզբունքները և լավ սահմանված միջոլորտային համագործակցությունը, որը ներառում է տարբեր ոլորտներ ներկայացնող նախարարություններ և ոչ պետական ոլորտի կազմակերպություններ:

Մի ոլորտում կայացրած որոշումներն անդրադառնում են մեկ այլ ոլորտի արդյունքների վրա, և առանձնահատուկ նպատակներն ու թիրախներն այլևս չեն կարող մեկը մյուսից մեկուսացված դիտարկվել: Քաղաքացիական հասարակությունը կարևոր գործընկեր է կառավարության և միջազգային հանրության համար՝ ապահովելու 2030թ. օրակարգը: Մասնավոր ոլորտն արդեն իսկ ԿՀՆ իրականացման համար անհրաժեշտ բազմաթիվ լուծումներ է առաջարկում:

Անդամ պետությունները շեշտադրում կատարեցին բնական պաշարների կառավարման խնդրի վրա՝ ինչպես կլիմայական փոփոխություններին հարմարեցման, այնպես էլ վերջինիս հետևանքների մեղմացման տեսանկյունից, մասնավորապես կարևորվեց գյուղատնտեսության կայուն զարգացումը կլիմայական փոփոխությունների ներքո ինչպես զարգացած, այնպես էլ անցումային տնտեսություններ ունեցող և զարգացող երկրներում: Ուստի անհրաժեշտ է քաղաքականության վերանայումը ԿՀՆ իրագործման տեսանկյունից, և ՊԳԿ-ն պարտավորվում է ներդրում և աջակցութուն ապահովել ԿՀՆ իրականացման գործում և նպաստել հետագա երկխոսության՝ հաշվի առնելով ԿՀՆ համալիր և բարդ լինելը Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի բազմազան տարածաշրջաններում, ինչը նաև փորձի և տեղեկատվության փոխանակման լայն հնարավորություն է ընձեռում:

ՊԳԿ աջակցությունը հետագայում ևս կնպաստի շահառուների տեղեկացվածության և միջոլորտային համագործակցության բարձրացմանը, ներառյալ ԿՀՆ շուրջ միջոլորտային գործընկերությանը և միջգերատեսչական համագործակցությանը:

Ընդգծվեց, որ Օրակարգ 2030-ի շրջանակներում առավել մեծ ուշադրություն պետք է հատկացնել առավել աղքատներին, առավել խոցելի խմբերին և մեծ կարիքի մեջ գտնվողներին: Առավել քիչ զարգացած պետությունները միջազգային հանրության աջակցության կարիքն ունեն տարբեր դրսևորումներով՝ ռեսուրսների, տեխնոլոգիաների, կարողությունների զարգացում և այն:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Ձեռք բերվեց պայմանավորվածություն աջակցություն ստանալ ԿՀՆ 2-րդ նպատակի ցուցանիշների և մեթոդաբանության մշակման հարցում, և նախատեսվում է ս.թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակում Հայաստանում ընդունել Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակի բարձրաստիճան ներկայացուցիչներին:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

- Հատուկ ուշադրություն դարձնել ծերացող գյուղական համայնքներին՝ ապահովելով երաշխիքներ գյուղերում երիտասարդների մնալու և աշխատելու, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրությունը զարգացնելու հարցում:
- Ներդնել սննդի վաուչերների համակարգ՝ որը հնարավորություն կընձեռնի աստիճանաբար հաղթահարել թերսնվածությունը՝ յուրաքանչյուրին ապահովելով անհրաժեշտ քանակի սննդի կալորիայով:
- Գյուղատնտեսության կայուն զարգացում ապահովելու նպատակով համատեղ ծրագրերի իրականացում՝ նպաստելով և հողագործության, և անասնապահության զարգացմանը:
- Հատկապես գյուղական բնակավայրերում աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման ապահովում, զբաղվածության համապատասխան ծրագրերի իրականացում, դրամական և բնեղեն եկամուտներ ստանալու հնարավորությունների ընդլայնում, որը կնպաստի սննդապահովման, սովի, թերսնուցման խնդրի լուծմանը և վերջին հաշվով նաև աղքատության հաղթահարմանը:

Գործուղման վերադարձի հաջորդ օրը կայացած Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ քննարկվել է ընտրված աղքատ գյուղական համայնքներում **պիլոտ ծրագրի իրականացման հարցը**: Հայաստանում ծրագրի կողմից կհաստատվի «Քեշ պլյուս» մոտեցում, որը կապ է ստեղծում երեխաներ ունեցող տնային տնտեսություններին ընտանեկան նպաստների հատկացման սոցիալական պաշտպանության ազգային ծրագրի և ապրուստի միջոցների ապահովման տարբերակների՝ փոքրամասշտաբ գյուղատնտեսական նորարարությունների, վերապատրաստման և ընդլայնման ծառայությունների, ինչպես նաև սնուցման կրթության միջև:

Ծրագրի անվանումն է՝ «Կովկասի և Կենտրոնական Ասիայի ընտրված երկրներում պարենային ապահովությանը և սնուցմանն ուղղված կարողությունների հզորացում»:

Ստացող երկրներ՝ Հայաստանի Հանրապետություն, Ղրղզստանի Հանրապետություն, Տաջիկստանի Հանրապետություն:

Կառավարություն(ներ)/ այլ գործընկեր(ներ)՝ Հայաստանի, Ղրղզստանի և Տաջիկստանի գյուղատնտեսության նախարարություններ, աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություններ և առողջապահության նախարարություններ, ՄԱԿ գործակալություններ, երկրի մակարդակում հասարակական կազմակերպություններ:

Ընդհանուր բյուջեն՝ 6,000,000.00 (վեց միլիոն) ԱՄՆ դոլար:

Այս ծրագրի նպատակն է հասնել 3 հիմնական արդյունքների՝

- ողջ ազգաբնակչության համար պարենային ապահովության և սնուցման բարձր մակարդակի ապահովման նպատակով արդյունքին միտված քաղաքականության, օրենսդրության և ծրագրերի մշակման կարողությունների բարելավում,
- պարենային ապահովության և սնուցման լավ կառավարմանն ուղղված բազմա- և միջոլորտային համակարգման բարելավում,
- պարենային ապահովության և սնուցման ոլորտում մարդկային ռեսուրսների և կազմակերպական զարգացման նպատակով կառավարությունների և այլ համապատասխան շահառուների կարողությունների բարելավում:

Գյուղատնտեսության և սննդի համակարգերի կայունության ապահովմանը զուգահեռ աղքատության, սովի և թերսնման վերացումը պահանջում է միասնական մոտեցում , որը գյուղատնտեսական և պարենային ապահովության միջամտություններում ներառում է սնուցումը և սոցիալական պաշտպանությունը:

Ազգային մակարդակում ծրագրի 3 արդյունքներն անմիջականորեն միտված են սննդի համակարգերում սոցիալական պաշտպանության, սնուցման և գյուղատնտեսական միջամտությունների միջև կապերի գործարկմանը:

10. Գործուղվողը Շամամ (Սոնա) Հարությունյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը 26.06.2017